

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2018 թվականի N _____ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի
N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ**

Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշման N 2 հավելվածի 10-րդ կետի՝

ա) 3-րդ սյունակում լրացնել «6» թիվը.

բ) 4-րդ սյունակում «9» թիվը փոխարինել «1» թվով.

գ) 5-րդ՝ սյունակում լրացնել «5» թիվը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Տեղեկանք-հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի

Սույն նախագծով առաջարկվում է Կրթության և գիտության նախարարությանը հատկացված և հատկացվող միջոցների խնայողության նպատակով կրճատել Կրթության և գիտության նախարարության լիցենզավորման գործակալությանը, լեզվի պետական կոմիտեին և բարձրագույն որակավորման կոմիտեին սպասարկող մեկական ծառայողական ավտոմեքենաները, նախարարության՝ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին և ենթակա մարմիններին/ լեզվի պետական կոմիտեին և բարձրագույն որակավորման կոմիտեին/ սպասարկող ծառայողական ավտոմեքենաների թիվը սահմանելով 6, այդ թվում՝ պետական մարմինների պաշտոնատար անձանց ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը սահմանելով՝ 1, իսկ պետական մարմիններին սպասարկող ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը սահմանելով՝ 5 :

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների անհրաժեշտություն չի առաջացնի:

Ամփոփաթերթ

Կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 411-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ նախարարություններից ստացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առարկության, առաջարկության բովանդակություն	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Պետական գույքի կառավարման կոմիտե 16.07.2018թ. հ.01/22.12/4247-18	Որոշան 2-րդ հավելվածի 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ լրացնելով նաև «ընդամենը» սյունակը, ինչպես նաև ճշտել «ընդամենը» տողը:	Ընդունվել է մասնակի քանի, որ սյունակների հանրագումարները ճշգրիտ չեն:	Նախագիծը լրամշակվել է. «ընդամենը» սյունակում լրացվել է «6» թիվը:
Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 13.07.2018թ. հ.01/15.2/11720-18	Առարկություններ, առաջարկություններ չկան:		
Արդարադատության նախարարություն 01.08.2018թ. հ.01/14/61905-18	Համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:		